ԱՐՄԵՆ ՌՈՒԴԻԿԻ ԲԱԴԱԼՅԱՆ

Ծննդյան տարեթիվ՝ 22.03.1969
Ծննդավայր՝ ՀՀ, քաղաք Երևան

Արմեն Ռուդիկի Բադալյանը 1976-1986 թթ. սովորել է Երևանի № 114 միջնակարգ դպրոցում:

1986 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը:

1987–1989 թթ. ծառայել է Խորհրդային բանակում:

1989 թվականից շարունակել է ուսումը Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում, որը գերազանցությամբ ավարտել է 1993 թ.: Նույն թվականին ձևակերպվել է որպես հայցորդ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

1998 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը «Ռազմաքաղաքական դրությունը Զանգեզուրում 1918-1921 թթ.» թեմայով:

1993 թ. աշխատանքի է ընդունվել Նորագույն պատմության պետական կենտրոնական արխիվ և արխիվային համակարգում աշխատել է մինչև 2021 թ. հուլիս:

2003-2021 թթ. եղել է Հայաստանի ազգային արխիվի գիտական քարտուղարը:

2003-2021 թթ. եղել է Հայաստանի ազգային արխիվի կողմից հրատարակվող «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսի պատասխանատու քարտուղարը:

2021 թ. աշխատում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում որպես գիտաշխատող:

Արմեն Բաղալյանի գիտական հետաքրքրությունների շրջանակում են Հայոց նորագույն ժամանակաշրջանի պատմության հարցերը, ինչպիսիք են՝ Հայաստանի խորհրդային հանրապետության, Հայրենիք-սփյուռք կապերը 1945-1985 թթ., խորհրդային իշխանություն-եկեղեցի հարաբերությունները ՀԽՍՀ տարիներին և այլն:

Արմեն Բաղալյանը համահեղինակ է մի քանի շողովածուների և քառասունից ավելի գիտական հոդվածների, որից մեկը ընդգրկված է Web of science ՄԳՇ-ում:

Արմեն Բաղալյանը գիտական զեկուցումներով և ելույթներով հանդես է եկել հանրապետական և միջազգային մի քանի գիտաժողովներում: